1. Գավառ քաղաք Զոհված Ազատամարտիկների փողոց 2-րդ նրբանցք թիվ 5/71 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00546 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 54.6 քմ. արտաքին /46.3 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Գավառ քաղաք Զոհված Ազատամարտիկների փողոց 2-րդ նրբանցք թիվ 5/71 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00546 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 54.6 քմ. արտաքին /46.3քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Զոհված Ազատամարտիկների փողոց 2-րդ նրբանցք թիվ 5/71 ավտոտնակ հասցեն:

5. Օրինականացված 54.6 քմ. արտաքին /46.3 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Լևոն Սամվելի Հայրապետյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1474-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՆՈՐԱՏՈՒՍ ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑ 64 ՀԱՍՑԵՈՒՄ ԳԱՐԻԿ ԺՈՐԱՅԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՀԵՍՏՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082025-05-0033 վկայականը, որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 03.04.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026YKL2YK ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. 2011թ-ին ինքնակամ կառուցված 74.3 քմ արտաքին /64.7 քմ ներքին/ մակերեսով պահեստը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 2056 /երկու հազար հիսունվեց/ ՀՀ դրամ, ընդամենը 74.3x2056=152800 /մեկ հարյուր հիսուներկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1475-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՅԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ԳԱՅԱՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 19.03.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 5-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.10905 հա, որը Արայիկ Գուրգենի Գասպարյանին /ծնված 02.11.1968թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 498.6 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1985թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10905 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված

սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 5-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արայիկ Գուրգենի Գասպարյանի /ծնված 02.11.1968թ-ին/, Գայանե Արամայիսի Մնացականյանի /ծնված 08.09.1972թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.02905 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.10905 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 498.6 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1985թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց, 5-րդ նրբանցք, 3 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1476-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՉԻԿ ԳԱԳԻԿԻ ՄՈՒՍՈՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՀԱՄԱԶԱՍՊԻ ԴԱԲԱՂՅԱՆԻ, ՕԼՅԱ ՀՐԱՉԻԿԻ ՄՈՒՍՈՅԱՆԻ, ԱՐՏՅՈՄ ՀՐԱՉԻԿԻ ՄՈՒՍՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 15.09.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ քաղաքի Ազատության 9-րդ փողոց 4 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.08512 հա, որը Հրաչիկ Գագիկի Մուսոյանին /ծնված 15.10.1952թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է, և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08512 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Ազատության 9-րդ փողոց 4 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Հրաչիկ Գագիկի Մուսոյանի /ծնված 15.10.1952թ-ին/, Անահիտ Համազասպի Դաբաղյանի /ծնված 26.12.1954թ-ին/, Օլյա Հրաչիկի Մուսոյանի /ծնված 30.10.1986թ-ին/ և Արտյոմ Հրաչիկի Մուսոյանի /ծնված 26.08.1979թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00512 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.08512 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Ազատության 9-րդ փողոց, 4 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1477-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ն. ԿԱՐԵՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 05.10.2023թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 06.12.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ն. Կարեյան փողոց 1-ին նրբանցք 10 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.07 հա, ինչը փաստացի կազմում է 0.07988 հա, որը Նարինե Հովհաննեսի Ոսկանյանին /ծնված 26.12.1966թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 104.60 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1960թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.07988 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ն. Կարեյան փողոց 1-ին նրբանցք 10 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Նարինե Հովհաննեսի Ոսկանյանի /ծնված 26.12.1966թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.07 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00988 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.07988 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 104.60 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1960թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 2021թ-ին կառուցված 112.10 քմ ընդհանուր մակերեսով ծածկերը ճանաչել որպես ինքնակամ շինություններ:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ն. Կարեյան փողոց, 1-ին նրբանցք, 8 հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղեկալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1478-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՆՈՐԱՏՈՒՍ ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 6-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ՑՈԼԱԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ԷՄՄԱ ԼԱԶԻԿԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ, ՍԵՐՈԲ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ՍԵՎԱԿ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 43-Ա, 10 ԱՊՐԻԼԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 716-Ա, 27 ՀՈՒԼԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ 1031-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 29.06.2026թ. տրված Նորատուսի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 01.06.1991թ. թիվ 16 որոշումից քաղվածքը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Նորատուս Սևանի փողոց 2-րդ նրբանցքի 6-րդ փակուղի 3 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, /հատկացվել է ընդհանուր 0.14 հա, որից 0.086 հա մակերեսով հողամասը արդեն ստացել է իրավունքի պետական գրանցում/, մակերեսը փաստացի կազմում է 0.084 հա, որը Սեյրան Ցոլակի Հայրապետյանին /ծնված 08.03.1961թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 290.00 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1986-1996թթ./ կառուցման ու

սպասարկման համար անհրաժեշտ 0.084 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. ՈՒԺը կորցրած ճանաչել Գավառի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 21-ի թիվ 43-Ա, 2026 թվականի ապրիլի 10-ի թիվ 716-Ա, և 2026 թվականի հուլիսի 27-ի 1031-Ա որոշումները:

2. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Նորատուս Սևանի փողոց 2-րդ նրբանցքի 6-րդ փակուղի 3 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սեյրան Ցոլակի Հայրապետյանի /ծնված 08.03.1961թ-ին/, Էմմա Լազիկի Սողոմոնյանի /ծնված 28.08.1960թ-ին/, Սերոբ Սեյրանի Հայրապետյանի /ծնված 16.08.1985թ-ին/, Սևակ Սեյրանի Հայրապետյանի /ծնված 14.09.1986թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.14 հա օրինական հատկացված հողամասից իրավունքի պետական գրանցում չստացած 0.054 հա հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.03 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.084 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 290.00 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1986-1996թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Նորատուս, Սևանի փողոց, 2-րդ նրբանցքի 6-րդ փակուղի, 3/1 հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1479-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշումներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն և 18.05.2006թ.«Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 20.12.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023XXTT3H ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Դավիթ Ֆելիքսի Սաֆարյանի դիմումը՝ Գավառ քաղաք Դ. Դեմիրճյան փողոց թիվ 25/2 հասցեում իր կողմից ինքնակամ կառուցված 21 քմ. արտաքին /20.10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.00210 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ***որոշում եմ***

1. Գավառ քաղաք Դ. Դեմիրճյան փողոց թիվ 25/2 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00210 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 21 քմ. արտաքին /20.10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Գավառ քաղաք Դ. Դեմիրճյան փողոց թիվ 25/2 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00210 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 21 քմ. արտաքին /20.10քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Դ. Դեմիրճյան փողոց թիվ 25/2 ավտոտնակ հասցեն:

5. Օրինականացված 21 քմ. արտաքին /20.10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Դավիթ Ֆելիքսի Սաֆարյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1480-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑ 105 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՅԹՅԱՆԻ, ԿԱՐԻՆԵ ԳԱՌՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԷԴՎԱՐԴԻ ՀԱՅԹՅԱՆԻ, ԷԼԼԱ ԷԴՎԱՐԴԻ ՀԱՅԹՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 09.10.2026թ. տրված Գավառ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Օգոստոսի 23-ի փողոց 105 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.08882 հա, որը Կարինե Գառնիկի Սարգսյանին /ծնված 31.10. 1967թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 228.2 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1987-1990թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08882 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Օգոստոսի 23-ի փողոց 105 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Էդվարդ Հովհաննեսի Հայթյանի /ծնված 26.06.1963թ-ին/, Կարինե Գառնիկի Սարգսյանի /ծնված 31.10.1967թ-ին/, Հովհաննես Էդվարդի Հայթյանի /ծնված 29.10.1987թ-ին/, Էլլա Էդվարդի Հայթյանի /ծնված 03.08.1989թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00882 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.08882 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 228.2 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1987-1990թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 1990թ-ին կառուցված 56.2 քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել որպես ինքնակամ շինություն:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Օգոստոսի 23-ի փողոց, 105 հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1481-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշումներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն և 18.05.2006թ.«Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 26.12.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023BWKUL4 ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Արա Սերյոժայի Բադոյանի դիմումը՝ Գավառ քաղաք Ազատության փողոց թիվ 39/5 հասցեում իր կողմից ինքնակամ կառուցված 33.4 քմ. արտաքին /30.2 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.00334 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը

1. Գավառ քաղաք Ազատության փողոց թիվ 39/5 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00334 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 33.4 քմ. արտաքին /30.2 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Գավառ քաղաք Ազատության փողոց թիվ 39/5 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00334 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 33.4 քմ. արտաքին /30.2քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ազատության փողոց թիվ 39/5 ավտոտնակ հասցեն:

5. Օրինականացված 33.4 քմ. արտաքին /30.2 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Արա Սերյոժայի Բադոյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1482-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը, Գավառ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով, ***որոշում եմ***

1. Ստեղծել Գավառ համայնքում 2027 թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի համակարգող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝
1) կազմել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել համայնքում 2027 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը,
2) հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմել և համայնքի ղեկավարին ներկայացնել մասնակցային բյուջետավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվություններ:
3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման հայտի ձևանմուշը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1483-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 3/4 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00138 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 10.09.2026թ. թիվ 8 նիստի թիվ 230-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գավառ համայնքի ք. Գավառ Զ. Անդրանիկի փողոց թիվ 1/1 հասցեի սեփականատեր Վարդգես Ստեփանի Մուսոյանի /ծնված 14.08.1988թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վկայականը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 17082026-05-0099, տրված 17.08.2026թ./, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց թիվ 3/4 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 0.00138 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1877.7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 13.8x1877.7=26000 /քսանվեց հազար/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված ծախսերի փոխհատուցման վճարների

35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, գնման նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու Գավառ համայնքի ք. Գավառ Զ. Անդրանիկի փողոց թիվ 1/1 հասցեի սեփականատեր Վարդգես Ստեփանի Մուսոյանին /ծնված 14.08.1988թ./:

2. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Վարդգես Ստեփանի Մուսոյանի /ծնված 14.08.1988թ./ հետ կնքելու Գավառ համայնքի ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց թիվ 3/4 հողամաս հասցեում գտնվող, հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1484-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ Զ. ՍԱՅԱԴՅԱՆ ՓՈՂՈՑ 2/3 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 02 ապրիլի 2015թ. 412-Ն որոշման 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08062026-05-0020 վկայականը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ քաղաք Զ. Սայադյան փողոց 2/3 հասցեի 322.6 քմ մակերեսով կարի ֆաբրիկայի 1-ին հարկից 110.0 քմ մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը արտադրական նշանակությունից փոխել հասարակական նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ առանց նախագծային փաստաթղթերի փոփոխության, փոխել ատամնաբուժական, վերականգնողական կենտրոնի:
2. Գավառ քաղաք Զ. Սայադյան փողոց 2/3 հասցեի 20.3 քմ մակերեսով օդախցիկի նպատակային նշանակությունը արտադրական նշանակությունից փոխել հասարակական նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ առանց նախագծային փաստաթղթերի փոփոխության, փոխել ատամնաբուժական, վերականգնողական կենտրոնի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 1485-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՏՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԼՈՒՍԻՆԵ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով և հիմք ընդունելով Լուսինե Սիրեկանյանի դիմումը, ***կարգադրում եմ***

1. 2026 թվականի նոյեմբերի 02-ից լուծել Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի վարչական ղեկավար Լուսինե Սիրեկանյանի աշխատանքային պայմանագիրը:
2. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետին՝ օրենքով սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1486-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 10-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՐԳԵՆ ԱՐՇԱԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ԼԻԴԱ ՄԵԼՔՈՆԻ ԲԱԴԵՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ՌՈՒԲԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 19.03.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց 10-րդ նրբանցքի 1-ին փակուղի 2 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.08135 հա, որը Գուրգեն Արշակի Գասպարյանին /ծնված 05.03.1937թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 266.3 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1955-1990թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08135 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց 10-րդ նրբանցքի 1-ին փակուղի 2 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Գուրգեն Արշակի Գասպարյանի /ծնված 05.03.1937թ-ին/, Լիդա Մելքոնի Բադեյանի /ծնված 22.04.1948թ-ին/, Նարինե Գուրգենի Գասպարյանի /ծնված 25.12.1973թ-ին/, Ռուբեն Գուրգենի Գասպարյանի /ծնված 23.04.1975թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00135 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.08135 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 266.3 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1955-1990թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց, 10-րդ նրբանցքի 1-ին փակուղի, 4 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1487-Ա

ՍԵՐԳԵՅ ԷԴՈՒԱՐԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՆՈՐԱՏՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 83-րդ հոդվածներով, ***որոշում եմ***

1. 2026 թվականի նոյեմբերի 02-ից Նորատուս բնակավայրի վարչական ղեկավար նշանակել Սերգեյ Էդուարդի Հակոբյանին՝ 6 ամիս ժամկետով:
2. Սերգեյ Հակոբյանի աշխատավարձը սահմանել համաձայն Գավառ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված դրույքաչափի:
3. Սերգեյ Հակոբյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 02
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1488-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՍԻՄՈՆԻ ՀՈԴԱԲԱՇՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արայիկ Հոդաբաշյանի դիմումը, ***որոշում եմ***

1. 2026 թվականի նոյեմբերի 02-ից լուծել Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրի վարչական ղեկավար Արայիկ Սիմոնի Հոդաբաշյանի աշխատանքային պայմանագիրը:
2. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետին՝ օրենքով սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:
3. Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել համայնքի ղեկավարի խորհրդական Ռուբեն Կոխպեցյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1489-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՄԱԴՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1393-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

